Ռոմանոս իշխան թագաւորեաց ամս Ն։ Սա ոչինչ բարութեանց լեալ արժանի, քանզի յաւուր մեծի Ն.շաբաթոջ՝ յետ խօսակցութեանց և պարգևատուութեանց առ զօրս և իշխանս իւր, խնդրեաց ջուր ոսկի ամանովն, զի լողասցի. և իբրև եմուտ 'ի ջուրն, յայնժամ խլեալ 'ի հերացն կոխեցաւ 'ի ջուրն՝ մինչև խեղդեցաւ յիւրայնոց սպասաւորացն. որոց մինն էր հետևալ դրդմամբ թագուհոյն։

Միխայել թագաւորեաց ամս Ջ։ Սա էառ զկնի Ռոմանոսի՝ իւր 'ի կնութիւնն. ուստի համբաւեալ արձանացաւ մահն Ռոմանոսի՝ բանիւ և չարութեամբ թագուհոյն եղեալ։ Սա Միխայելն ունեցեալ եղև ցաւ դիւական. սա շինեաց զսուրբ Յարութիւնն. զոր Թամամ սուտ քրիստոնէիւք գնացեալ յԵրուսաղէմ այրեաց զնա. յաւուրս Թէոփիլոսի ՃԵ.երրորդ թագաւորի շինեաց Միխայել և զանարծաթ